Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2021թ. օգոստոսի 20-ից 22-ը Ռուսաստանի Դաշնություն (Նիժնի Նովգորոդ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արարատ Գրիգորյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն (Նիժնի Նովգորոդ), օգոստոսի 20-ից 22-ը

4. Հրավիրող կողմը.

Ռուսաստանի Դաշնության Նիժեգորոդի մարզի նահանգապետ Գլեբ Նիկիտին

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի և Ռուսաստանի Դաշնության Նիժեգորոդի մարզերի միջև համագործակցության շրջանակներում Նիժեգորոդի մարզի Նիժնի Նովգորոդ քաղաքի հիմնադրման 800-ամյակին նվիրված միջոցառմանը մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները.

2021թ. օգոստոսի 19-ից 21-ը Նիժնի Նովգորոդում տեղի են ունեցել մի շարք միջոցառումներ՝ նվիրված քաղաքի հիմնադրման 800-ամյակին, որն ամփոփվել է «Նորի սկիզբը» եզրափակիչ գալա համերգով: Տոնակատարություններին մասնակցել են աշխարհի 15 երկրների ավելի քան 20 օտարերկրյա պատվիրակություններ:

Այցի ընթացքում քննարկվել են երկու գործընկեր մարզերի միջև համագործակցության զարգացման, ընդլայնման և նոր ուղիների մշակման հնարավորությունները: Ներկայացվել են Վայոց ձորի մարզի տնտեսության կարևորագույն ուղղությունները, արտահանման ներուժ ունեցող արտադրանքները, ինչպես նաև մարզի՝ ներկրման համար անհրաժեշտ առաջնահերթությունները: Հանդիպման ընթացքում խոսվեց վայոցձորյան և հայկական արտադրանքի՝

Նիժեգորոդի մարզ արտահանելու հնարավորությունների, գոյություն ունեցող ծավալների ընդլայնման, և բեռնափոխադրման կազմակերպման հետ կապված հարցերի վերաբերյալ: Հատուկ ուշադրություն է դարձվել գյուղատնտեսության ոլորտին, որի շրջանակներում քննարկվել են Վայոց ձորի մարզից բանջարեղենի և մրգերի, մասնավորապես խաղողի արտահանման հնարավորությունները: Անդրադարձ է կատարվել նաև Նիժեգորոդի մարզ հայկական գինիների արտահանման հնարավոր տարբերակներին:

Քննարկվել են Վայոց ձորի մարզպետարանի և Նիժեգորոդի մարզի կառավարության համապատասխան ստորաբաժանումների գործակցության ակտիվացման և համագործակցության տարբեր ուղղությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման առավել արդյունավետ իրականացման, ինչպես նաև երկու մարզերի միջև գործարար կապերի ընդլայնման հետ կապված հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում օգոստոսի 20-ին տեղի է ունեցել հանդիպում Նիժեգորոդի մարզի փոխնահանգապետ Անդրեյ Սանոսյանի և կառավարության արտաքին կապերի վարչության տնօրեն Օլգա Գուսևայի հետ: Հայկական կողմից հանդիպմանը մասնակցել են Արենի խոշորացված համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանը և գործարար Մուշեղ Ներսիսյանը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը շնորհավորել է Նիժեգորոդի մարզի բարեկամ բնակչությանը նշանակալից իրադարձության կապակցությամբ: Իր խոսքում Արարատ Գրիգորյանը բարձր է գնահատել մարզերի միջև սերտ համագործակցությունը տնտեսության, կրթության և մշակույթի ոլորտներում, և վստահություն է հայտնել, որ համատեղ ջանքերի շնորհիվ հնարավոր կլինի ընդլայնել փոխգործակցության ոլորտները և դրանք համալրել նոր ուղղություններով: Երկուստեք կարևորվել է դպրոցական կրթության ոլորտում երկկողմ փոխգործակցությունը, որի շրջանակներում դեռևս 2014 թվականին Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում ռուսաց լեզվի խորացված ուսումնասիրությամբ թիվ 1 դպրոցը անվանակոչվեց գրող Մաքսիմ Գորկու անունով: Իր հերթին, Նիժնի Նովգորոդի Ավտոզավոդսկի շրջանի թիվ 18 մանկական արվեստի դպրոցը կրում է Արամ Խաչատրյանի անունը: Իսկ այս տարվա օգոստոս ամսին դպրոցի դիմաց բացվեց ականավոր կոմպոզիտորի կիսանդրին:

Խոսելով համագործակցության ընդլայնման մասին, մարզպետ Արարատ Գրիգորյանը կարևորել է տարբեր ոլորտներում համատեղ միջոցառումների կազմակերպման, փորձի փոխանակման և միասնական մոտեցման ստեղծման անհրաժեշտությունը:

Հանդիպում է տեղի ունեցել Նիժեգորոդի հայկական համայնքի ղեկավար, Նիժնի Նովգորոդում ՀՀ պատվավոր հյուպատոս Աղասի Ալեքյանի հետ, որի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ ջանքերը ներդնել երկու մարզերի միջև ջերմ հարաբերությունների ամրապնդման, հայկական արտադրանքի՝ Նիժեգորոդի մարզ արտահանման կազմակերպման ուղղությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ հայկական կողմի հրավերով Նիժեգորոդի մարզի պատվիրակությունը հոկտեմբեր ամսին կայցելի Վայոց ձորի մարզ՝ մասնակցելու Արենի գինու փառատոնին:

Կողմերի միջև նախնական համաձայնություն է ձեռք բերվել հանդիպման ընթացքում քննարկված հարցերը և առաջարկները հետագա համագործակցության միջոցով բերել պայմանագրային դաշտ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպման ընթացքում ռուսական կողմին առաջարկվել է դիտարկել Վայոց ձորի մարզի Արենի համայնքի և Նիժեգորոդի մարզի քաղաքներից մեկի միջև համագործակցության հաստատման և քույր քաղաքներ հռչակելու հնարավորությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

24.08.2021